ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9

«03» փետրվարի 2020թվական գյուղ Ամասիա

ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6,57 ՀԵԿՏԱՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԸՆԴԵՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2,27 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ՈՒՐԱԼ ԱՐՆԱՇ ՍՏՐՈՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 73-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանի 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 5 որոշումը,

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող 6,57 հեկտար գյուղատնտեսական նշանակության և 2,27 հեկտար արդյունաբերության ու ընդերքօգտագործման հողամասերը ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով վարձակալության իրավունքով, 2 տարի ժամկետով, 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ամսական վարձավճարով, օգտագործման տրամադրել «Ուրալ Արնաշ Ստրոյ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել հողամասի հետախուզական աշխատանքներ կատարելու իրավունքի

տրամադրման պայմանագիր և սույն որոշումից բխող իրավունքները ենթարկել պետական գրանցման՝ ընկերության միջոցների հաշվին:

2. Հողամասի սահմանված կարգով կազմված հատակագիծը կցվում է սույն որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«03» փետրվարի 2020 թվական
գյուղ Ամասիա